

ՀԱՅԱԴԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒՎԵՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄԻ

Սկսած XIX դարից հայկական բանասիրությունը պատվավոր տեղ է գրավել Լուվենի կաթոլիկ համալսարանում: 1834 թ. Լուվենի համալսարանի վերակազմակերպմանը ղուգընթաց, տեղի ունեցավ նաև արևելագիտության վերահաստատումը, որի նախաձեռնողն էր պրոֆ. Ժ. Տ. Բելենը² (Beelen, 1807—1884): Նա դասավանդում էր եբրայերեն, արամեերեն, ասորերեն, արաբերեն: Սակայն Լուվենում և ընդհանրապես Բելգիայում հայագիտության առաջին ներկայացուցիչը եղավ փիլիսոփայության և բանասիրության ֆակուլտետի դասախոս, պրոֆ. Ֆելիքս Նևը³ (1816—1893):

1839 թ. Մյունխենի համալսարան կատարած իր այցելության ընթացքում էր, հավանաբար, որ Ֆ. Նևը որոշեց հայոց լեզուն ուսումնասիրել: Այստեղ նա կարողացավ լսել պրոֆ. Ս. Ֆ. Նոյմանի (1793—1870) դասախոսությունները, որը դասական հայերենի ամբիոնի վարիչն էր, և հարաբերություններ հաստատեց լեզվաբան-հայագետ Ֆ. Վ. Վինդիշմանի (1818

—1861) հետ: Նրա ուսումնասիրությունները քիչ չափով էին առնչվում ղուտ բանասիրական և լեզվաբանական խնդիրներին և վերաբերում էին մատենագրական ու պատմական հարցերին⁴: Նրա բաղմամբով հայագիտական հրատարակությունների մեջ հիշենք գլխավոր շարականներին նվիրված թարգմանությունները և պրպտումները հայ ականավոր պատմիչների (հատկապես XV դարի պատմիչ Թովմա Մեծփեցու, Նդիշե պատմիչի և XII դարի պատմիչ Մատթեոս Ուռհայեցու) մասին: Այս ուսումնասիրությունների մեծամասնությունը վերանայվելուց և լրացվելուց հետո լույս տեսավ նրա 1866 թ. հրատարակված աշխատության մեջ⁵: Որպես ներածություն, նա այստեղ ավելացրեց հայ մատենագրության մի ուրվագիծ: Հիշյալ հայագիտական աշխատությունների շնորհիվ Ֆ. Նևը արժանացավ Վենետիկի ս. Ղազարի ակադեմիայի անդամի կոչմանը (1864 թ.):

Միայն 1920 թ. էր, որ հայոց լեզվի հատուկ դասընթաց հիմնադրվեց և հանձնարարվեց պրոֆ. Ժ. Լըբոնին⁷ (1879—1957), որն այն պահեց մինչև 1938 թ.: Լըբոնը հետաքրքրվում էր հայ մատենագրությամբ, հատկապես նկատի ունենալով այն կարևորությունը, որ դա ունի հունական հայրաբանության ուսումնասիրման համար⁸: Նրա պրպտումներից

¹ Լուվենի համալսարանը գոյություն ունի 1425—1426 թթ. և Բելգիայի հնագույն համալսարանն է: Այնտեղ է գործել XVI դարում վերածննդի մեծ մտածող էրազմ Ռոտերդամցին: Պաշտոնապես կոչվում է Լուվենի կաթոլիկ Համալսարան: Ծան. թարգմ.:

² Լուվենում արևելագիտության վերականգնման շարժման սկզբնավորման մասին տե՛ս G. R y c k m a n s, L'Orientalisme a Louvain avant 1936. Trentième anniversaire de l'Institut Orientaliste. 1er février 1966 (Universitas Catholica Lovaniensis). Louvain, 1966, էջ 13—14; L. Th. L e f o r t, Les recherches orientalistes a l'Université de Louvain, Sacra Pagina. Miscellanea biblica congressus internationalis Catholici de re biblica (Bibliotheca Ephemeridum Theologicarum Lovaniensium, XII—XIII). Vol. I, Gembloux, 1959, էջ 43; G. R y c k m a n s, L'Orientalisme en Belgique, Revue Générale Belge, 23 (1947), էջ 726; G. R y c k m a n s, Les langues Orientales, Ephemerides Theologicae Lovanienses 9 (1932), p. 688—690.

³ Ֆ. Նևի աշխատությունների մատենագիտության համար տե՛ս F. L e f e b v r e, Notice sur la vie et les travaux de M. Félix Nève, professeur émérite a la Faculté de Philosophie et Lettres, Annuaire de l'Université Catholique de Louvain, 1894, Cinquante-huitième année. Louvain, 1894, էջ XIV—XLVII.

⁴ Տե՛ս Bibliographie académique de l'Université Catholique de Louvain, 1834—1900, Louvain, 1908, էջ 214—220: հիշված 120 գրքերի և հոդվածների մեջ 17-ը բացառապես հայագիտական են:

⁵ Տե՛ս F. N è v e, L'Arménie chrétienne et sa littérature, Louvain—Berlin—Paris, 1886.

⁶ Տե՛ս համալսարանի դասապետ Հ. Լադեզի (Ladeuze) 1920—21 ակադեմիական տարվա բացման ճառը. Annuaire de l'Université Catholique de Louvain. 1920—1926, Tongres, էջ 565—566.

⁷ Տե՛ս A. V a n R o e y, In memoriam. Monseigneur Joseph Lebon, Professeur émérite de la Faculté de Théologie, Annuaire de l'Université Catholique de Louvain, 1957—1959, Tome 92, vol. III, Louvain, 1965, էջ 40—54.

⁸ Այս տեսակետի վկայությունն է այն վերնադիրը, որ այս դասընթացը կրում է 1920—1921 տարվա ծրագրում՝ Programme des Cours de l'Université Catholique de Louvain. Année académique 1920—1921, Louvain, 1920, էջ 36. Պրոֆ. Ժ. Լըբոնի աշխա-

Հատկապես պետք է հիշել Կյուրեղ Աղեքսանդրացու առ Երրայեցիս թղթի մեկնության հայերեն պատառիկների հրատարակությունը⁹, Կեսարիայի ժողովի (314 և 319 թթ. միջև) կանոնների հրատարակությունը¹⁰ և նրա ուսումնասիրությունները¹¹ «Կնիք հաւատոյ» ժողովածուի մեջ հունական հայրերի մատենագրություններից եղած վկայակոչումների և միաբնակ Տիմոթեոս Կուղի (մեռ. 477)¹² հայերեն ու ասորերեն տարբերակների մասին:

Այս շրջանում Լուվենի համալսարանում արեւելագիտության դասավանդումը կենտրոնացած էր երկու ֆակուլտետներում: Երրայեցիներ, արամեերենը, ասորերենը, արաբերենը և զրպտիերենը դասավանդվում էին աստվածաբանության, իսկ հայերենը (ինչպես նաև սանսկրիտը)¹³ փիլիսոփայության և բանասիրության ֆակուլտետներում: Այս երկու ֆակուլտետներն ունեին երկու տեսակ դոկտորական աստիճան, մեկը՝ սեմական լեզուների դոկտորականը (աստվածաբանության ֆակուլտետում), ստեղծված 1909 թ. և մյուսը՝ արեւելյան լեզուների դոկտորականը (փիլիսոփայության և բանասիրության ֆակուլտետում), ստեղծված 1921 թ.: 1936 թ. մինչ այդ երկու ֆակուլտետներում ցրված արեւելագիտական դասընթացների վերակազմումով ստեղծվեց արեւելագիտության հաստատությունը¹³. Արեւելագիտական դասընթացները, որոնք մինչ այդ համարվում էին օժանդակ գիտական առարկաներ, այժմ ստացան անկախ գոյավիճակ: Այս նոր հաստատությունը, որը վարչականորեն կախման

մեջ էր փիլիսոփայության և բանասիրության ֆակուլտետից, նրա նախաձեռնողների կամքով հիմնականում հատկացվեց բոլոր հին արեւելյան լեզուների դասավանդմանը և Արեւելքի հին ժողովուրդների պատմության քննական ուսումնասիրմանը: Այժմ նա արդեն ավարտական վկայականներ էր տալիս բանասիրության և Արեւելքի պատմության թեկնածուներին (Candidat)¹⁴, լիցենցիատներին (Licencié) և դոկտորներին (Docteur): Գոյություն ունեն հինգ ուղղություններ՝ քամյան-սեմական, հնդեվրոպական, հեռավորարեւելյան, քրիստոնյա Արեւելքի և Բյուզանդական աշխարհի (ստեղծված 1971 թ.):

Հայերենի դասընթացը երկու աստիճան ունի. մի տարրական դասընթաց (մոտավորապես 30 ժամ) և մի բարձրագույն երկամյա դասընթաց (տարեկան 60 ժամ): Առաջին տարվա հիմքն է այբուրենի և գրաբարի տարրական ձեռնարկության ուսուցումը, նոր Կտակարանի բնագրի ընթերցումը, ձեռնարկության որոշ մանրամասնություններ և շարահյուսության հիմնական գծերը: Բարձրագույն դասընթացի երկու տարիների ուսուցումը ընդգրկում է բնագրերի ընթերցում (նոր Կտակարան, պատմիչներ, հայրաբանական գրվածքներ՝ թե՛ հայերեն գրված, թե՛ հունարենից ու ասորերենից թարգմանված), ձեռնարկության և շարահյուսության խոր դասավանդում, հնագրության գործնական ծանոթացում, ձեռագրերի վերծանման վարժություններ և հայերեն գրաբար անտիպ բնագրերի հրատարակության պատրաստում ու թարգմանություն:

1935 թ. դասական հայերենի ամբիոնը տրվեց պրոֆ. Ժ. Մյլդերմանսին (Muyldermans, 1891—1964)¹⁵: Փարիզում ստացած ուսումը նրան լավ պատրաստություն էր տվել այս բանի համար: Նա 1921-ից մինչև 1925 թ. հաճախել էր Բարձրագույն ուսման դպրոցի (École des Hautes Études) և Փարիզի արեւելյան կենդանի լեզուների դպրոցի դասընթացները: Հայոց լեզվի և գրականության նրա ուսուցիչներն էին Անտուան Մեյեն և Ֆրեդերիկ Մակլերը: Նա միաժամանակ օգտվել է Լուի Մարիեի (Ma-

տությունների լիակատար մատենագիտության համար տե՛ս Bibliographie académique de l'Université de Louvain, IV, Louvain, 1920, էջ 20; V, 1924, էջ 14; VI, 1937, էջ 12—14; VII, 1954, էջ 301—303.

⁹ Տե՛ս J. Le bon, Fragments arméniens du Commentaire sur l'Épître aux Hébreux de Saint Cyrille d'Alexandrie. Le Muséon, 44 (1931), էջ 69—114, 46 (1933), էջ 237—246.

¹⁰ Տե՛ս J. Le bon, Sur une Concile de Césarée, Le Muséon, 51 (1938), էջ 89—132.

¹¹ Տե՛ս J. Le bon, Les citations patristiques grecques du „Sceau de la Foi“, Revue d'Histoire Ecclésiastique, 25 (1929), էջ 5—32.

¹² Տե՛ս J. Le bon, Version arménienne et version syriaque de Timothée Elure, «Հանդէս Ամսօրյա», 41 (1927), 713—722.

¹³ Տե՛ս Լադեզի 1936—1937 տեղեկատվական տարվա բացման ճառը (Annuaire de l'Université Catholique de Louvain, 1936—1939, Tome 84, Vol. II, Tongres, էջ 113—114).

¹⁴ Այս եզակի «թեկնածուականը» (Candidature) ստեղծվել է 1963 թ.: Թեկնածու հանձնելու համար անհրաժեշտ է ստանալ փիլիսոփայության և բանասիրության թեկնածուի, աստվածաբանության լիցենցիատի և կամ որևէ այլ՝ համազոր նկատված վկայական:

¹⁵ Մանրամասն կենսագրությունը տե՛ս G. Garitte, Nécrologie. Joseph Muyldermans (1891—1964), Muséon, 78 (1965), էջ 249—253.

ries) գիտելիքներից, որը 1926 թ. դասական հայերենի ուսուցում մտցրեց Փարիզի կաթոլիկ հաստատության մեջ: 1927 թ. նրա հրատարակած աշխատությունը Հայաստանում արաբական տիրապետության շրջանի մասին¹⁶ (Ա. Մեյեի և Յ. Մակլերի ղեկավարության ներքո) Միլ-դերմանսին արժանացրեց Բարձրագույն ուսման գործնական դպրոցի (Ecole Pratique des Hautes Etudes) պատմական և քանասիրական գիտությունների բաժանմունքի «դիպլոմավոր սան» (Elève diplômé) կոչմանը: Այս աշխատությունը, որը պարունակում է Վարդան պատմիչի (մեռ. 1271) «Տիեզերական պատմութեան» մի կարևոր մասի հրատարակությունը և մանրամասն մեկնությունը, մինչև օրս մնում է լավագույն ուղեցույցը՝ Հայաստանի VII—IX դդ. պատմությունը ուսումնասիրելու համար:

Միլդերմանսը աչքի ընկավ Հայաստանի պատմության վերաբերյալ իր պրպտումներով, ձեռագիր բնագրերի ուսումնասիրությամբ, Եվագր Պոնտացու (346—399) մատենագրական ժառանգության և Եվագր—Նեղոս առնչությունների մասին աշխատություններով¹⁷: Նրա պատմական ուսումնասիրություններից նշենք հայկական պատմագրության ընդհանուր նկարագիրը¹⁸, ձեռագրագիտական աշխատություններից՝ Եվագր Պոնտացու Երուսաղեմի ձեռագրերի¹⁹ և Փարիզի Ազգային գրադարանի²⁰ № 110, 120 և 122 հայերեն ձեռագրերի բաղեխիղճ նկարագրությունը: Նրա գործերից է նաև Վենետիկի ձե-

ռագրացուցակում ընդգրկված բոլոր հայրաբանական գրվածքների ցանկը²¹, Վերջապես նա իր գիտական գործունեության հենց սկզբից հետաքրքրվել է Եվագր Պոնտացու գործերով, որի գրական ժառանգության պատմությունը ձգտել է պարզաբանել, մանրակրկիտ պրպտելով նրա հունարեն, ասորերեն և հայերեն բնագրերը, ինչպես նաև հավաստիության խնդիրը՝ Եվագր—Նեղոս հարցի առնչությամբ²², Մահը խանգարեց նրան հրատարակել այն ամենը, ինչ հայերեն պահպանվել է Եվագրի անունով (ինչ նա արդեն արել էր հունարեն²³ և ասորերեն²⁴ բնագրերի կապակցությամբ):

1961 թ. դասական հայերենի ամբիոնը հանձնվեց Բելգիայի արքունի ակադեմիայի

²¹ Տե՛ս J. M u y l d e r m a n s, Répertoire des pièces patristiques d'après le catalogue arménien de Venise, Le Muséon, 47 (1934), էջ 265—292.

²² Տե՛ս J. M u y l d e r m a n s, Une recension arménienne du Syntagma doctrinae, «Հանդես Ամսօրյա», 41 (1927), էջ 687—700, ն ու յ ն ի՝ Le Discours de Xystus dans la version arménienne d'Evagrius le Pontique, Revue des Etudes Arméniennes, 9 (1929) էջ 183—201; ն ու յ ն ի՝ Evagre le Pontique. Les capita cognoscitiva dans les versions syriaque et arménienne, Le Muséon, 47 (1934), էջ 73—106; ն ու յ ն ի՝ Miscellanea armeniaca, Le Muséon, 47 (1934), p. 293—296; ն ու յ ն ի՝ Une nouvelle recension du De octo spiritibus malitiae de S. Nil, Le Muséon, 52 (1939), էջ 235—274; ն ու յ ն ի՝ Fragment arménien du Ad virgines d'Evagre, Le Muséon, 53 (1940), էջ 77—87; ն ու յ ն ի՝ Sur les Seraphins et les Chérubins d'Evagre le Pontique dans les versions syriaque et arménienne. Le Muséon, 59 (1946), էջ 367—379; Saint Nil en version arménienne, Le Muséon 56 (1943), էջ 77—113; ն ու յ ն ի՝ Les citations bibliques dans la version arménienne de l'«Antirrheticus» d'Evagre le Pontique, «Հանդես Ամսօրեայ», 75 (1961), էջ 442—448:

²³ J. M u y l d e r m a n s, À travers la tradition manuscrite d'Evagre le Pontique. Essai sur les manuscrits grecs conservés à la Bibliothèque Nationale de Paris (Bibliothèque du Muséon, 3), Louvain, 1932.

²⁴ J. M u y l d e r m a n s, Evagriana syriaca. Textes inédits du British Museum et de la Vaticane (Bibliothèque du Muséon 31), Louvain, 1952.

¹⁶ Տե՛ս J. M u y l d e r m a n s, La domination arabe en Arménie. Extrait de l'Histoire universelle de Vartan traduit de l'arménien et annoté. Etude de critique textuelle et littéraire, Louvain et Paris, 1927.

¹⁷ Տե՛ս կատարյալ մատենագիտությունը՝ G. G a r i t t e, Nécrologie. Joseph M u y l d e r m a n s (1891—1964), Le Muséon, 78 (1965) էջ 253—256.

¹⁸ Տե՛ս J. M u y l d e r m a n s, L'Historiographie arménienne, Le Muséon, 76 (1963), էջ 109—144.

¹⁹ Տե՛ս J. M u y l d e r m a n s, Les manuscrits arméniens d'Evagre le Pontique à Jérusalem, «Բաղմավեպ», 113 (1955), էջ 72—78, 108—114.

²⁰ Տե՛ս J. M u y l d e r m a n s, Note sur le Parisinus srménien 110, Revue des Etudes Arméniennes, nouv. série, 1 (1964), էջ 101—120; J. M u y l d e r m a n s, Les manuscrits arméniens 120 et 121 de la Bibliothèque Nationale de Paris, Le Muséon, 74 (1961), էջ 75—90.

անդամ, պրոֆ. Ժ. Գարիթին²⁵։ Նա լուսնում աշակերտել է պրոֆ. Ժ. Լըբոնին, իսկ Հռոմում ս. զրային հայրապետական հաստատության արևելյան ֆակուլտետի հայերենի դասախոս Հ. Լիոնեին²⁶։

Պրոֆ. Ժ. Գարիթի բազում աշխատությունների առարկան Ագաթանգեղոսի Մատյանի²⁷ ուսումնասիրությունն է։ Ագաթանգեղոսին նվիրված իր զրքում, որը լույս տեսավ 1946 թ., նա ի հայտ է բերել հունարեն Ագաթանգեղոսի մի շարք բնագրեր, հրատարակելով հայերեն բնագրի մի հունարեն անտիպ խմբագրություն՝ էսկուրիալի (Իսպանիա) հունարեն վարքը (Վ. հուն.), որն արաբերեն վարքի (Վ. ար., BHO 332)²⁸ մի մասի աղբյուրն է։ Դեռևս 1941 և 1943 թթ. լույս տեսած հոդվածներով²⁹ նա արդեն ճանապարհ էր հարթել այս աշխատության համար։

25 Պրոֆ. Ժ. Գարիթի աշխատությունների մատենագիտությունը տե՛ս E. L a m o t t e, Gerard Garitte, Orbis. Bulletin international de Documentation linguistique, 9 (1960), էջ 238—247 (մինչև 1960)։ 1961—1968 թվականների համար տե՛ս Bibliographie Academique de l'Université de Louvain (Mgr J. Coppens), X (1957—1963), Louvain, 1964, էջ 419—424; XII (1963—1968), Louvain, 1972, էջ 274—276; XIII (1963—1968), Suppl., Louvain, 1975, էջ 385; J. A. V a n H o u t t e, Un quart de siècle de recherches historique en Belgique. (Comité National Belge des Sciences Historiques), Louvain, 1970, էջ 101—103։

26 Հ. Լիոնեն եղել է պրոֆեսորներ Ա. Մեյերի, Է. Բենվենիստի և Լ. Մարիեի աշակերտը։ 1932 թ. նա Բարձրագույն ուսման գործնական դպրոցի պատմական և բանասիրական բաժանմունքից ստացել է «դիպլոմավոր սան» կոչումը։ Տե՛ս St. Lyonnet, Le Pariait en arménien classique, principalement dans la traduction des Evangiles et chez Eznik (Collection linguistique publiée par la Société Linguistique de Paris), Paris, 1933։

27 Տե՛ս G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange (Studi e Testi, 127), Cité du Vatican, 1946։

28 Տե՛ս Bibliotheca Hagiographica Orientalis (Subsidia Hagiographica, 10), Bruxelles 1970 (réimpression de l'édition de 1910), էջ 77։

29 Տե՛ս G. Garitte, La tradition manuscrite de l'„Agathange“ grec, Revue d'Histoire Ecclésiastique, 37 (1941), էջ 190—209; Fragments palimpsestes de l'Agathange grec, Le Muséon, 56 (1943), էջ 35—53։

Ժ. Գարիթը հետաքրքրվել է նաև Ագաթանգեղոսի արաբերեն և վրացերեն տարբերակներով։ Այսպես, նա 1946 թ. հրատարակել է հունարեն Ագաթանգեղոսի արաբերեն պատառիկները, քաղված «Հարանց խոստովանութիւն» կոչված միարնակ վարդապետական ժողովածուից, որը կաղմվել է մոտավորապես 1078 թ.³⁰ 1950-ին նա մատնանշել է հունարեն Ագաթանգեղոսի մի արաբերեն տարբերակի (Sin. ar. 395)³¹ գոյությունը, որը Ա. Տեր-Ղևոնդյանը հրատարակեց 1968 թ.³² 1952-ին նա ի հայտ բերեց Ագաթանգեղոսի պատմության մի համառոտ խմբագրություն³³, որը հունարեն Ագաթանգեղոսի հետ առնչվում է մի ղպտական անհայտ բնագրի միջոցով։ Գարիթը ուսումնասիրել է հայերեն Ագաթանգեղոսի հին վրացական տարբերակի XI դարի մի պատառիկ (cod. Add. 1890. 3), որը գտնվում է Քեմբրիջի (Անգլիա) համալսարանի գրադարանում³⁴, թարգմանելով ԺԳ—ԺԹ գլուխները (հայկ. Ագաթ. 137—210, հուն. Ագաթ. 59—88), որոնք վերաբերում են Հովհաննիսյան կույսերին³⁵։ Հրատարակել է նաև կեղծ Հիպոլիտի «Վասն հաւատոյ» վրացերեն դրվածքը, ուր բազմաթիվ քաղվածքներ կան հայերեն Ագաթանգեղոսի վարդապետությունից³⁶։ 1962 թ. նա ուսումնասիրեց Օքրիդայի (Մակեդոնիա) X դարի ձեռագրում (cod. 4 Ochrida)

³⁰ Տե՛ս G. Garitte, Fragments de l'„Agathange“ grec en traduction arabe, Le Muséon, 59 (1946), էջ 413—420։

³¹ Տե՛ս G. Garitte, Une version arabe de l'„Agathange“ grec dans le Sin. ar. 395, Le Muséon, 63 (1950), էջ 231—247։

³² Տե՛ս Ա. Ն. Տեր-Ղևոնդյան, Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը (արաբերեն բնագիր և ուսումնասիրություն), Երևան, 1968։

³³ Տե՛ս G. Garitte, Une Vie arabe de saint Grégoire d'Arménie, Le Muséon, 61 (1952), էջ 51—71։

³⁴ Տե՛ս G. Garitte, Sur un fragment géorgien d'Agathange, Le Muséon, 61 (1948), էջ 89—102 (1909 թ. հրատ., § 181—184)։

³⁵ G. Garitte, La Passion des Saintes Rhipsimiennes en géorgien (Agathange ch. XIII—XIX), Le Muséon, 75 (1962), p. 233—251. Տե՛ս Բ. Արուստամյանի քննական հրատարակությունը. Բ. ԶԵՄԼՈՎ, აგათანგელოსის რიფსიმეანთა მარტვილობის ძველი ქართული თარგმანი ხელნაწერთა ინსტიტუტი, მოამბე, 2, თბ., 1960, էջ 163—177։

³⁶ Տե՛ս G. Garitte, Le traité géorgien „Sur la Foi“ attribué a Hippolyte, Le Muséon, 78 (1965), էջ 119—172։

գտնվող ս. Գրիգորի Վարքը³⁷, որի քննական բնագիրը հրատարակեց³⁸ 1965 թ. ցույց տալով, որ բնագրի երկրորդ մասը (էջ 132—155) թարգմանված է եղել հայերեն Ագաթանգեղոսի մի անհայտ խմբագրությունից և եղել է 1905 թ. Ն. Մառի³⁹ հրատարակած արաբական Վարքի (BHO 332) մի մասի աղբյուրը։ Նրանում նա մատնանշել է նաև վարդապետությունից հունարեն քաղվածքներ⁴⁰։

Հայ եկեղեցու 325 և 700 թթ. միջև ընկած պատմության ուսումնասիրման համար անկասկած մեծ օժանդակություն էր Հայաստանի պատմության (Narratio de rebus Armeniae)⁴¹ քննական հրատարակությունը 1952 թ. Ժ. Գարիթի կողմից, պատմական մանրամասն ծանոթագրություններով հանդերձ։ Սա հունարեն գրված մի ժամանակագրություն է, որը քաղվել էր հունական տեսանկյունից շարադրում է հայ եկեղեցու պատմությունը՝ բյուզանդական եկեղեցու հետ ունեցած առնչություններով։ Նա ապացուցել է, որ սա թարգմանված է եղել հայերեն օրինակից։ 1958 թ. Ժ. Գարիթը հայտնաբերել է XIV դարի մի նոր ձեռագիր⁴² (cod. Sin. gr. 1699) և տվել նրա ձեռագրային բաղադրությունը։

Պրոֆ. Գարիթը հրատարակել է նաև բազում այլ հունարեն բնագրեր, ցույց տալով, որ դրանք

հայերենից են թարգմանվել և հանդիսանում են հայկական քաղվեղոնական մատենագրության բեկորներ (օրինակ, ս. Սահակի հունարեն տեքստը, որը Ղազար Փարպեցու Պատմությունից⁴³ մի հատված է և մի հունարեն գրվածք՝ հաղորդության գինու մեջ ջուր խառնելու մասին⁴⁴)։

Ժ. Գարիթը հետաքրքրվել է նաև Կարին—Թեոդոպոլսի եպիսկոպոս Թեոդորոսի (VI դար) գործունեությամբ⁴⁵։ Հայերի հետ բանավիճային պրականությունը նա հարստացրել է նաև հայերին ուղղված վրացերեն ճերեսուն ճառերին⁴⁶ նվիրված մի հոդված⁴⁶։

Նա հրատարակել է նմանապես հունական եկեղեցու հայերի մատենագրության հայերեն թարգմանությունները, հատկապես Հիպոլիտի Դավիթ և Գողիաթ գրվածքի հայերեն պատառիկները⁴⁷, Ս. Աթանասի տոնական ճառերը, որոնց հունարեն բնագիրը կորած է, բայց մնացել են վկայակոչումներ Տիմոթեոս Կուզի հայերեն բնագրում⁴⁸։ Գարիթը ուսումնասիրել է Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» աշխատության հայերեն թարգմանությունը և IX դարի մի ձեռագրի պատառիկները համեմատել է նրա Վիեննայի հրատարակության

³⁷ Տե՛ս G. Garitte, Une nouvelle Vie grecque de S. Gregoire d'Arménie, Byzantion, 32 (1962), էջ 63—73.

³⁸ Տե՛ս G. Garitte, La Vie grecque inédite de saint Grégoire d'Arménie (M. 4 d'Ochrida), Analecta Bollandiana, 83 (1965), էջ 233—290.

³⁹ Н. Я. Марр, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием, «Зап. Вост. отд. Имп. русск. арх. общ.», 16, СПб, 1905, էջ 63—212.

⁴⁰ Տե՛ս G. Garitte, Un petit florilège diphysite grec traduit de l'arménien, Studia Biblica et Orientalia, III, Rome, 1959. Մեծ վարդապետությունից երկու քաղվածք գրտնվում է Սինայի XIV դարի մի ձեռագրում (cod. Sin. gr. 1699), էջ 255—278.

⁴¹ Տե՛ս G. Garitte, La Narratio de Rebus Armeniae. Edition critique et Commentaire (Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 132, Subs. 4), Louvain, 1952.

⁴² Տե՛ս G. Garitte, Un nouveau manuscrit de la «Narratio de rebus Armeniae». Le Sin. gr. 1699, Le Muséon, 71 (1958), էջ 241—258.

⁴³ Տե՛ս G. Garitte, La vision de S. Sahak en grec, Le Muséon, 71 (1958), p. 255—278 (Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, 1904, էջ 26 տ. 29—էջ 30 տ. 3)։

⁴⁴ Տե՛ս G. Garitte, Un opuscule grec traduit de l'arménien sur l'addition d'eau au vin eucharistique, Le Muséon, 73 (1960), էջ 297—310.

⁴⁵ Տե՛ս G. Garitte, Saint Théodore, évêque de Karin-Théodosiopolis (VI^e siècle), Armeniaca. Mélanges d'Etudes Arméniennes. Venise, 1969, էջ 1—8.

⁴⁶ Տե՛ս G. Garitte, La source grecque des «Trente articles» géorgiens contre les Arméniens, «Հանդես Ամսօրյա», 90 (1976), էջ 111—116։ Սրա աղբյուրը Րուսակ Բ Կաթողիկոսի Պարսավականն է (Patrologie Grecque, vol. 132, col. 1221—1237; G. Garitte, Les écrits antlarméniens dits du Catholicos Isaac, Revue d'Histoire Ecclesiastique, 45 (1950) էջ 711—715).

⁴⁷ Տե՛ս G. Garitte, Fragments arméniens du traité d'Hippolyte sur David et Goliath, Le Muséon, 16 (1963), p. 277—318.

⁴⁸ Տե՛ս G. Garitte, Les citations arméniennes des Lettres Festales de S. Athanase, «Հանդես Ամսօրյա», 75 (1961), էջ 425—440.

հետ (1832 թ.)⁴⁹, նա տվել է նաև ս. Եփրեմի՝ Հովնանի մասին քարոզի հայերեն տարբերակի թարգմանությունը⁵⁰:

Գարիթին հետաքրքրել են նաև հայերեն վարքագրական բնագրերը (ինչպես՝ Ս. Վլասի վկայաբանության հայերեն տարբերակը⁵¹, «Գիտ նշխարաց երից մանկանցն Բաբելոնի»⁵², Թովմաս Առաքյալի հայերեն վկայաբանությունը)⁵³:

Այս տարբեր աշխատությունների, ինչպես նաև քրիստոնյա Արևելքի տարբեր լեզուներով մեզ հասած բնագրերին վերաբերող այլ ուսումնասիրությունների հիման վրա 1959 թ. նրան շնորհվեց Ֆրանքի (Francqui)⁵⁴ մրցանակը, իսկ 1975 թ.՝ Բրյուսելի «Բուլանդիստների ընկերության համախոհ (adhérent) անգամի» կոչումը:

Արևելագիտության հաստատության հայկական բաժինը բազում աշակերտներ են հաճախել: Մենք կնշենք միայն նրանց, ովքեր աչքի են ընկել հայերենի վերաբերյալ աշխատություններով⁵⁵:

Ի. Դրիսենը բանասիրության և արևելյան պատմության լիցենցիատ է դարձել 1952 թ.: Աստվածաբանության դոկտորի աստիճան ստանալու համար Լուվենի համալսարանին ներկա-

յացված իր աշխատության մեջ նա հատկապես ուսումնասիրել է ս. Բարսեղի հայերեն ձեռագրերը: Մի հատվածի մեջ⁵⁶ նա ուսումնասիրել է Ս. Բարսեղի այն ձեռագրերը, որոնք պահվում են Վենետիկի Ս. Ղազարի վանքի մատենադարանում:

Ժ. Գրիբոմոնը (Սեն Ժերոմ, Հոռմ), որը 1953 թ. պաշտպանել է իր դոկտորական աշխատանքը (արևելյան բանասիրության և պատմության գծով) ս. Բարսեղի «Ճգնաւորաց» բնագրի մասին: Այստեղ նա մի գլուխ է հատկացրել «Ճգնավորացի» հայերեն տարբերակին⁵⁷:

Հոռմի ս. գրային հայրապետական հաստատության արևելյան բաժնի ղպտերենի դասախոս Հ. Քեկը (Quecke) արևելյան բանասիրության և պատմության դոկտորի կոչում ստացավ 1970 թ.⁵⁸, նա ուսումնասիրել է Հակոբի անվավեր Ավետարանի հայերեն տարբերակները, տալով նրանց ճշգրիտ լատիներեն թարգմանությունը⁵⁹:

Հարվարդի (Քեմբրիջ, Մասսաչուսեթս, ԱՄՆ) համալսարանի դասական հայերենի ամբիոնի վարիչ Ռ. Թոմսոնը արևելյան բանասիրության և պատմության լիցենցիատի վկայական է ստացել 1962 թ.: Նա գրել է դասական հայերենի բերականությունը⁶⁰, անգլերենի է թարգմանել

⁴⁹ Տե՛ս G. Garitte, Les Catéchèses de S. Cyrille de Jérusalem en armenien. Fragments d'un manuscrit du IX^e siècle, Le Muséon, 76 (1963), էջ 95—108.

⁵⁰ G. Garitte, La version arménienne du Sermon de saint Ephrem sur Jonas, Revue des Etudes Arméniennes, nouv. série, 6 (1969), էջ 23—43: Սա Եփրեմի Վենետիկի հրատարակության (հատ. Դ, 1836) մի մասի թարգմանությունն է:

⁵¹ Տե՛ս G. Garitte, La Passion arménienne de saint Blaise, Le Muséon, 68 (1955), էջ 47—54.

⁵² Տե՛ս G. Garitte, Le texte arménien de l'Invention des Trois Enfants de Baby-lone, Le Muséon, 74 (1961), էջ 91—108.

⁵³ Տե՛ս G. Garitte, La Passion arménienne de S. Thomas l'apôtre et son modèle grec, Le Muséon, 84 (1971), էջ 151—195.

⁵⁴ Սա ամենաբարձր աստիճանն է, որ Բելգիայում տրվել է երիտասարդ գիտնականի, որի գիտական հրատարակությունները միջազգային հանձնաժողովի կողմից ճանաչվել են որպես համաշխարհային գիտությանը օգտակար գործեր:

⁵⁵ Մենք հավակնություն չունենք այստեղ նշելու Լուվենի արևելագիտության հաստատության հին սաների աշխատությունների լիակատար մատենագիտությունը:

⁵⁶ Տե՛ս I. W. Driessen, Les recueils manuscrits arméniens de saint Basile, Le Muséon, 66 (1953), էջ 65—95. Այս հոդվածը թարգմանվել է հայերեն և տպագրվել «Բազմավեպում» (112, 1954, էջ 6—10, 65—70, 237—242, 281—287):

⁵⁷ Տե՛ս J. Gribomont, Histoire du texte des Ascétiques de S. Basile (Bibliothèque du Muséon, 32), Louvain, 1953 (հատկապես էջ 65—67):

⁵⁸ Տե՛ս H. Quecke, Untersuchungen zum koptischen Stundengebet (Publications de l'Institut Orientaliste de Louvain, 3), Louvain-la-Neuve, 1970.

⁵⁹ Տե՛ս H. Quecke, Les versions arméniennes traduites en latin, „E. de Strycker, La forme la plus ancienne du Protévangile de Jacques. Recherches sur le papyrus Bodmer 5 avec une édition critique du texte grec et une traduction annotée (Subsidia Hagiographica, 33)“, Bruxelles, 1961, p. 441—473: Խոսքը վերաբերում է Հ. Օ. Տայեցու հրատարակության մի բառացի թարգմանությանը: Անկանոն պիրք նոր կտակարանաց (Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, Բ, Վենետիկ 1898) էջ 237—250:

⁶⁰ Տե՛ս R. W. Thomson, An introduction to Classical Armenian, New York, 1975.

հայերեն Ագաթանգեղոսը (Պատմությունը և Վարդապետությունը), տալով մանրամասն ծանոթագրություններ⁶¹ և բազմաթիվ ուսումնասիրություններ է հրատարակել հայոց լեզվի մասին⁶²:

Յրիբուրդի (Շվեյցարիա) համալսարանի դասական հայերենի դասախոս Դ. վան Դամը (Van Damme) արևելյան բանասիրության և պատմության լիցենցիատի վկայական է ստացել 1966 թ. և միաժամանակ հեղինակ է դասական հայերենի մի տարրական քերականության⁶³:

Մ. վան Էսբրոեքը (Esbroeck), Բրյուսելի Բուլանդիստների ընկերությունից, ստացել է արևելյան բանասիրության և պատմության դոկտորի աստիճան 1975 թ.⁶⁴: Հատկապես հետաքրքրվել է Հայաստանում քրիստոնեության տարածման հարցերով և հրատարակել XII դարի ասորերեն օրինակից թարգմանված քարշունի (ասորատառ արարերեն) Մ. Գրիգորի Վարք⁶⁵, նշելով նաև նրա շեղումները Հրատա-

րակել է նաև Ս. Գորգիոսի (մեռ. 379) հայերեն վկայարանությունը⁶⁶:

Սույն հոդվածի հեղինակը արևելյան բանասիրության և պատմության դոկտորի աստիճան է ստացել 1973 թ.⁶⁷: Բացի հունարեն Ագաթանգեղոսի մասին իր աշխատությունից⁶⁸, նա հրատարակել է նվաճաբեկ Աղեքսանդրացու. (IV—VI դդ. հունական ծածկանուն) երկու քարոզների հայերեն տարբերակը⁶⁹, Ափրաստ Ասորու երկերի հայերեն տարբերակը⁷⁰ և այժմ պատրաստում է Գրիգոր Նազիանզացու Ճառե-

Etudes Arméniennes, nouv. serie, 8 (1971), 13—167 (texte Karshûni, p. 22—95); նույնի՝ Le roi Sanatrouk et l'apôtre Thaddée, Revue des Etudes Arméniennes, nouv. série, 9 (1972), p. 241—283; նույնի՝ Le résumé syriaque de l'Agathange et sa portée pour l'histoire du développement de la légende, «Հանդես Ամսորյա» 90 (1976), էջ 493—510, ասորերեն բնագիրը հրատարակվի Analecta Bollandiana, 95 (1977).

⁶⁶ M. Van Esbroeck, La Passion arménienne de saint Gordius de Césarée, Analecta Bollandiana, 94 (1976), էջ 357—386.

⁶⁷ Տե՛ս G. Lafontaine, La version grecque ancienne du Livre arménien d'Agathange. Edition critique (Publications de l'Institut Orientaliste de Louvain, 7), Louvain-la-Neuve, 1973.

⁶⁸ Տե՛ս G. Lafontaine, Une Vie grec abrégée de Saint Grégoire l'Illuminateur (Cod. Sin. gr. 376), Le Muséon, 85 (1973), p. 125—145; Un nouveau remaniement grec de la vie de Saint Grégoire l'Illuminateur (Cod. Athon. Philoth. 9), Le Muséon, 88 (1975), էջ 125—152.

⁶⁹ Տե՛ս G. Lafontaine, Le Sermon „Sur le Dimanche“ d'„Eusèbe d'Alexandrie“. Version arménienne et version géorgienne, Le Muséon, 87 (1974), p. 23—44; La version arménienne du Sermon sur l'Ascension d'Eusèbe d'Alexandrie, «Հանդես Ամսորյա», 90 (1976), 521—576; La version arménienne du Sermon d'Eusèbe d'Alexandrie „Sur la descente de Jean aux Enfers, լույս կտեսնի Le Muséon, 91 (1978).

⁷⁰ Տե՛ս G. Lafontaine, La Version arménienne des Oeuvres d'Aphraate le Syrien. Tome I (texte et traduction) (Corpus Scriptorum Christianorum Orientalium), 382—383, Arm. 7—8), Louvain, 1977. Մյուս երկու հատորները շուտով լույս կտեսնեն:

⁶¹ Տե՛ս R. W. Thomson, The Teaching of Saint Gregory. An Early Armenian Catechism. Translation and Commentary (Harvard Armenian Texts and Studies, 3), Cambridge (Massachusetts), 1970; Agathangelos. History of the Armenians. Translation and Commentary, Albany, 1976.

⁶² Տե՛ս հատկապես R. W. Thomson, Vardapet in the Armenian church, Le Muséon, 75 (1962), p. 367—384; նույնի՝ Early Armenian Catechetical Instruction, Armeniaca. Mélanges d'études arméniennes, Venise, 1968, էջ 98—108; նույնի՝ The Fathers in Early Armenian literature, Studia Patristica, 12 (1975), էջ 459—472. Նշենք նաև արևմտահայերենի քերականությունը՝ R. W. Thomson and K. Bardakjian, Textbook of Modern Western Armenian, New York, 1977.

⁶³ Տե՛ս D. Van Damme, A short Classical Armenian Grammar (Orbis Biblicus et Orientalis. Subsidia didactica, 1), Fribourg-Göttingen, 1974.

⁶⁴ Տե՛ս M. Van Esbroeck, Les plus anciens homéliaires géorgiens. Etude descriptive et historique (Publications de l'Institut Orientaliste de Louvain), Louvain-la-Neuve, 1975.

⁶⁵ M. Van Esbroeck, Témoignages littéraires sur les sépultures de S. Grégoire l'Illuminateur, Analecta Bollandiana, 99 (1971), էջ 397—413; նույնի՝ Un nouveau témoin du Livre d'Agathange, Revue des

քի հայերեն տարբերակի⁷¹ քննական հրատարակությունը:

Լուվենի արևելագիտական հաստատության մեջ կարդացված այս դասընթացների, հրատարակված աշխատությունների և շնորհված կոչումների կողքին հարկ է նշել նաև հետևյալ նախաձեռնությունները, որոնք Լուվենի համալսարանում ապահովել են արևելագիտական և հատկապես հայագիտական ուսումնասիրությունների զարգացումը: Դրանցից է «Մյուզեոն» արևելագիտական հանդեսը, որ հիմնվել է 1881 թ. պրոֆ. Շ. դը Հարլեզի⁷² կողմից (1950 թ. նրա ղեկավարն է պրոֆ. Ժ. Գարիթը): Նրա առաջին տնօրենների⁷³ գիտական հակումների պատճառով հանդեսի հոդվածները սկզբում վերաբերում էին առավելապես Հեռավոր Արևելքի պատմության հարցերին, քան քրիստոնյա Արևելքին: Սակայն սկսած 1921 թ., հայտնի դատագետ Լ. Թ. Լրֆորի (1879—1959) կողմից նրա վերահրատարակումից հետո տպագրվում են գլխավորապես քրիստոնյա Արևելքի վերաբերյալ հրատարակություններ և ուսումնասիրություններ: 1929 թ. հիմնվեց «Մյուզեոնի մատենաշարը», որտեղ տպագրվում էին հաստատության սաների դոկտորական աշխատանքները⁷⁴: Այս ժողովածուն դադարեցվեց 1968 թ. և այժմ Լուվենի կաթոլիկ համալսարանի կողմից հրատարակվում է «Լուվենի արևելագիտական հաստատության հրատարակություններ» շարքը (ֆրանսերեն):

Քրիստոնյա Արևելքի վերաբերյալ կա նաև «Քրիստոնյա արևելյան մատենագիրների ժողովածուն» (Corpus Scriptorum Christianorum Orientalium = CSCO)⁷⁵, որը հիմնվել է

1902 թ. Փարիզում, հայտնի ասորագետ և Լուվենի համալսարանի դոկտոր Ժ. Բ. Շարոյի (1860—1948) նախաձեռնությամբ: Նա 1912 թ. այս ժողովածուի հրատարակությունը փոխանցեց Ամերիկայի կաթոլիկ համալսարանին (Վաշինգտոն, ԱՄՆ) և Լուվենի կաթոլիկ համալսարանին, իսկ ինքը մնաց ժողովածուի ընդհանուր քարտուղարը՝ մինչև իր մահը: 1948 թ. սկսած այդ դերը կատարում է պրոֆ. Ռ. Դրագեն, Վերջինս հարստացրել է այդ ժողովածուն, 1948 թ. դրա մեջ ստեղծելով հայկական շարքը⁷⁶, որի գիտական տնօրենն է պրոֆ. Ժ. Գարիթը, ինչպես նաև եթովպերենի, արաբերենի, ղպտիերենի, վրացերենի, ասորերենի և հայերենի⁷⁷ ուսումնասիրման վերաբերյալ օժան-

avant 1936, Trentième anniversaire de l'Institut Orientaliste, 1er février 1966 (Universitas Catholica Lovaniensis), Louvain 1966, էջ 24—25.

⁷⁶ Տե՛ս L. Leloir, S. Ephrem. Commentaire de l'Evangile concordant, version arménienne (texte et traduction) CSCO 137 et 145 Arm.), Louvain, 1953, C. J. F. Dowssett, The Penitential of David of Ganjak (CSCO 216—217, Arm. 3—4), Louvain, 1961 G. A. Egan, Saint Ephrem, an Exposition of the Gospel (CSCO 291—292, Arm. 5—6), Louvain, 1968: Շուտով լույս կտեսնի նաև Ափրաատի հայերեն տարբերակը (տե՛ս ծան. 70):

⁷⁷ Ժ. Գարիթի դրքից բացի (ծան. 41), Լ. Լըլուարը հրատարակել է հատորների մի շարք՝ համաբարբառ Ավետարանի մասին հին հայկական օրինակի և հայկական հայրաբանական (paterica) գրականության մասին. տե՛ս L. Leloir, L'Evangile d'Ephrem d'après les oeuvres éditée des textes (CSCO, 180 Subs. 12), Louvain, 1958; նույնի՝ Doctrines et méthodes de S. Ephrem d'après son Commentaire de l'Evangile concordant (original syriaque et version arménienne (CSCO 220, Subs. 18), Louvain, 1961, նույնի՝ Le Témoignage d'Ephrem sur le Diatessaron (CSCO 227, Subs. 19), Louvain, 1962; նույնի՝ Citations du Nouveau Testament dans l'ancienne tradition arménienne. I, A—B, L'Evangile de Matthieu (CSCO 283—284, Subs. 31—32), Louvain, 1967; նույնի՝ Paterica armeniaca a P. P. Mechitarists edita (1855) nunc latine redita (CSCO 353, 361, 871, 379, Subs. 42, 43, 47, 51), Louvain, 1974, 1975, 1976; B. Reyniers, Lexique comparé du texte grec et des versions latine, arménienne et syriaque

⁷¹ Ձեռագրերի. եկարագրություն տե՛ս G. Lafontaine, La tradition manuscrite de la Version arménienne des Discours de Grégoire de Nazianze. Prolégomènes à l'édition, Le Muséon, 90 (1971). Այս աշխատությունը լույս կտեսնի Corpus Scriptorum Christianorum Orientalium.

⁷² A. Van Lantschoot, Le Muséon. Tables des années 1882 à 1931 (Bibliothèque du Muséon, 4), Louvain, 1932, էջ V—VII.

⁷³ Խոսքը վերաբերում է Շ. դը Հարլեզին, Լ. դը Լավալե Պուսսենին և Ֆ. Կոլինենին:

⁷⁴ Արդեն հիշված գրքերից բացի (տե՛ս ծան. 22, 23 և 56), պետք է ավելացնել M. E. Buytaert, L'héritage littéraire d'Eusèbe d'Emèse. Textes (Bibliothèque du Muséon, 24), Louvain, 1949, Մանավանդ եվսեբիոս եմեսացու հայերեն օրինակին նվիրված էջերը:

⁷⁵ Դրա ստեղծման պատմությունը տե՛ս G. Ryckmans, L'Orientalisme à Louvain

դակ» (Subsidia) շարքը: Ցայսօր այս ժողովածուի մեջ հրատարակվել է 388 հատոր:

Ինչպես կարելի է նկատել, լուվենի համալսարանի հայագիտական «դպրոցի» գիտական գործունեության մասին այս համառոտ ուրվագծից, նախաձեռնված պրպտումները ընթացել են որոշակի ծրագրի համաձայն: Ըստ էության հայոց լեզվի դասընթացը լուվենում ստեղծվել է որպես քրիստոնյա Արևելքի՝ հունական հայրաբանական մատենագրության և այլ

արևելյան քրիստոնյա մատենագրությունների մի մասը, ուստի և հասկանալի է, որ հայագիտական «դպրոցի» ուշադրությունը սեռված է եղել հայկական մշակութային ժառանգության հատկապես դավանաբանական կողմի ուսումնասիրման վրա: Այստեղ հայկական բանասիրությունը ի սպաս է դրված հայկական հին բնագրերը և հայ ժողովրդի նոգևոր անցյալը ավելի լավ ճանաչելու գործին:

ԳԻ ԼԱՅՈՆՏԵՆ (Բելգիա)

Քարգմ. ֆրանսերենից՝ Ա. Տեր-Ղևոնդյանի

ПЕРВЫЙ ИССЛЕДОВАТЕЛЬ СКЕВРСКОГО ТРИПТИХА

В истории мирового прикладного искусства найдется немного памятников, которые не только отразили художественные и технические достижения эпохи, но и художественно воплотили исторические события, пережитые страной, чаяния своего народа. У армян таким памятником по праву можно считать серебряный триптих-реликварий чеканной работы, исполненный в 1293 г. в монастыре Скевра (Киликийская Армения)¹. Заказчик складня — настоятель Скеврской обители епископ Константин — повелевал сделать его в память защитников Ромклайской цитадели, разгромленной египетскими мамлюками в 1292 г.

В 1978 г. исполняется 150 лет с момента открытия скеврского реликвария. Честь этого открытия принадлежит переводчику при посольстве сардинского короля в Стамбуле барону Аствацатуру Папазяну (*Աստվածատուր Փափազեանց*, Astvadzadour Papasian, Adeodato Papasiant). В начале 1828 г. он обнаружил триптих в доминиканском монастыре Санта Кроче в сел. Бос-

ко недалеко от Александрии в Пьемонте (Сев. Италия)². Внушительные размеры складня [выс. 63,5 см, шир. 35,5 см (с раскрытыми створками — 69,5 см), толщ. 7,5 см], мастерское исполнение большого числа украшающих его чеканных фигурных изображений, обширные надписи — все это заинтересовало Папазяна, и он занялся его изучением. Уже в апреле того же года Папазян на итальянском языке подробно описал памятник, сопроводив описание сжатым историческим комментарием, скопировал надписи, заказал пять рисунков памятника в половину оригинала.

Однако по неизвестным нам причинам полное издание триптиха не осуществилось. Весной 1828 г. в типографии Конгрегации Мхитаристов монастыря св. Лазаря близ Венеции было отпечатано пять гравированных таблиц-прорисовок реликвария. Эти гравюры дают в целом верное представление о памятнике (рис. 1), его деталях (рис. 2, 4, 5), характере вкладной чеканной надписи (рис. 3)³.

Через два года, в 1830 г., в той же типографии очень небольшим тиражом была напечатана на армянском языке часть исследования Папазяна, посвященная надписям на триптихе. Здесь же автор привел армянский текст привилегии, полученной генуэз-

de l'«Adversus Haereses» de saint Irénée. I, II (CSCO 141—142, Subs. 5—6), Louvain, 1954.

¹ ГЭ, инв. № Vз—828. В Эрмитаж поступил из парижской коллекции А. П. Базилевского в 1884 г., четыремя годами ранее Базилевский приобрел его в Италии. Литература о триптихе обширна, основные работы указаны в нашей статье «Скеврский триптих 1293 г.: замысел заказчика — воплощение мастеров», «Вестник Ереванского университета», 1975, № 3, стр. 244—248.

² Папазян высказал предположение, что реликварий попал сюда в числе многочис-

ленных даров монастырской братии папы Пия VI (1566—72).

³ Поскольку издание, в котором помещены эти гравюры, труднодоступно, мы сочли необходимым воспроизвести здесь все пять рисунков. К тому же боковые стенки реликвария (рис. 2), кроме Папазяна, никем не воспроизводились.